ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Մալիշկայի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ Մալիշկայի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

1. ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկայի համայնքապետարանի առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-2/

Առաջատար մասնագետը՝

ա) սահմանված կարգով վերահսկում է պետական բյուջեից համայնքին հատկացված միջոցների ընթացիկ ֆինանսավորումը և դրանց նպատակային օգտագործումը .

բ) մասնակցում է համայնքի բյուջեի նախագծի նախապատրաստման աշխատանքներին .

գ) համակարգում է համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման աշխատանքները: Իրականացնում է համայնքի ղեկավարի աշխատակազմի ամսեկան , եռամսյակային և տարեկան ֆինանսական հաշվետվությունների , հաշվեկշիռների կազմման , ներկայացման և վերլուծության աշխատանքները .

գ) կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.

դ) ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.

ե) հետևում է քարտուղարի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում, կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է բաժնի պետին.

զ) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

է) իրականացնում է քաղաքացիների հերթագրում՝ քարտուղարի մոտ ընդունելության համար.

ը) քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

թ) քարտուղարի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան.
ժ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
Առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

Ներկայացվող պահանջները՝

ա) ունի առնվազն միջնակարգ կրթություն
բ)ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության , <<Համայնքային ծառայության մասին>>,<<Տեղական ինքնակառավարման մասին>>,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>,<<Գանձապետական համակարգի մասին>>,<<ՀՀ Բյուջետային համակարգի մասին>>, <<Հաշվապահական հաշվառման մասին>>, <<Դրամարկղային գործառնությունների մասին>> ՀՀ օրենքների ,ՀՀ կառավարության 1997 թվականի հուլիսի 17-ի N 282 որոշման,աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված նորմատիվ իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն,ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն
գ)տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը
դ)ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կկայանա 14.09.2020թ ժամը 15:00-ին,Մալիշկայի համայնքապետարանում: Հասցե՝ ՀՀ Վայոց ձորի մարզ գ.Մալիշկա փողոց 1 շենք 1 հեռ.0281-95-4-06 :

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կագավիճակ ունեցող անձինք (այսուհետև՝ քաղաքացիներ): Դիմող քաղաքացիները Մալիշկայի համայնքապետարանի աշխատակազմ կամ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
ա)գրավոր դիմում մրցութային հանձնաժողովի անունով(ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)
բ)հայտարարություն այն մասին որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ դեկտեմբերի 15-ի թիվ 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով չի տառապում

գ)տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի ՝դիպլոմի(ների),վկայական(ների) պատճենները՝ բնօրինակների հետ միասին
դ)հայտարարություն այն մասին ,որ դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ չի ճանաչվել
ե)արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք
զ)մեկ լուսանկար 3*4սմ չափսի
է)անձնագրի պատճենը

Քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ՝ ներկայացնելով անձնագիրը:

Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի,աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչև 18.00-ը բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2020 թվականի օգոստոսի 24-ը ժամը 18.00-ն:

ՄԱԼԻՇԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Հեռախոս՝0281-95-406